Մաթեմատիկա 5-րդ դասարան

Մարզային Փուլ 2025 թ

Տևողությունը – 2ժ 30 րոպե

1. Քանի՞ քառանիշ թիվ կա, որոնցից յուրաքանչյուրը փոքր է 2025-ից և ավարտվում է 5 թվանշանով:

1) 101 2) 102 3) 201 4) 405

2. Քանի՞ թվանշան ունի $\underbrace{444.....44}_{\text{20 հատ}} : \underbrace{444...44}_{\text{10 հատ}}$ բաժանման արդյունքը:

1) 2 2) 10 3) 11 4) այլ պատասխան

3. Գտնել այն թվերի քանակը, որոնք ունեն ճիշտ 2 երկնիշ բազմապատիկ:

1) 15 2) 16 3) 25 4) 40

4. Եթե քառանիշ թվի երկրորդ թվանշանը ջնջենք, ապա կստանանք նույն թիվը ինչ-որ երրորդ թվանշանը ջնջելիս: Քանի՞ այդպիսի քառանիշ թիվ կա:

1) 900 2) 90 3) 9 4) այլ պատասխան

5. Անին գնեց 4 խնձոր: Առանց առաջին խնձորի՝ մյուսները միասին 600 գ են, առանց երկրորդի՝ 570 գ, առանց երրորդի՝ 550 գ, առանց չորրորդի՝ 500 գ: Քանի՞ գրամ են կշռում 4 խնձորները միասին:

1) 730 2) 740 3) 750 4) 760

6. Էլեկտրոնային ժամացույցը ցույց է տալիս ժամը և րոպեն (օրինակ՝ ժամը 2 անց 20 րոպեին նրա ցուցմունքն է՝ 02 : 20): Նշված օրինակում, եթե ժամ ցույց տվող թվի թվանշանների տեղերը փոխենք ապա կստանանք րոպե ցույց տվող թիվը: Օրվա ընթացքում ժամացույցի ցուցմունքներից քանի՞սն ունեն այդ հատկությունը: Նկատառում՝ օրվա սկսվում է 00:00 ից և վերջանում 23:59:

1) 23 2) 15 3) 16 4) 24

7. Հինգ հաջորդական զույգ թվերի գումարը մեծ է 160-ից և փոքր է 180-ից: Գտնել այդ թվերից ամենամեծի թվանշանների գումարը:

1) 8 2) 9 3) 10 4) 11

8. 9 մետրանոց գերանը անտառահատները սղոցով բաժանեցին հավասար մասերի՝ կտրելով 3 տեղով: Այնուհետև ստացված մասերից յուրաքանչյուրը նույնպես բաժանեցին հավասար մասերի՝ կտրելով 2 տեղով: Քանի՞ սմ է յուրաքանչյուր կտորի երկարությունը:

1) 75 2) 90 3) 150 4) 180

9. Արտաքինից իրարից չտարբերվող 9 մետաղադրամներից մեկը կեղծ է և իսկական-ներից թեթև է: Նժարավոր կշեռքի ամենաքիչը քանի՞ կշռումով (առանց կշռաքարերի) կարելի է գտնել կեղծ մետաղադրամը:

1) 8 2) 4 3) 3 4) 2

10. Գնացքը իր երկարությանը հավասար կամուրջը ամբողջովին անցնում է 30 վարկյանում: Քանի՞ վարկյանում նա ամբողջովին կանցնի իր երկարությունից 3 անգամ երկար կամուրջով:

1) 60 2) 75 3) 90 4) 120

11. Մեկ տարի առաջ Լևոնի տարիքը 7 անգամ փոքր էր հոր տարիքից, իսկ մեկ տարի հետո՝ 5 անգամ փոքր կլինի: Քանի՞ տարեկան է Լևոնի հայրը:

12. Դավիթը իր գրքույկի էջերը համարակալելիս 4 թվանշանը գրել է 30 անգամ: Քանի՞ թերթ ունի Դավիթի գրքույկը:

13. Բազմահարկ շենքի երեք սենյականոց և չորս սենյականոց բոլոր 60 բնակարանները միասին ունեն 222 սենյակ: Չորս սենյականոց բնակարանները քանիսո՞վ են շատ երեք սենյականոց բնակարաններից:

14. Եթե եռանիշ թվին ձախից կցագրենք 5 թվանշանը, ապա կստանանք 4 անգամ մեծ թիվ, քան աջից 2 կցագրելիս: Գտնել այդ եռանիշ թիվը:

15. 21-րդ դարում (2001թ.--2100թ.) քանի՞ տարեթիվ կա, որոնցից յարաքանչյուրը կազմված է չորս տարբեր թվանշաններից: